

ՍԳՈ ՆԻՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի վախճանման կապակցությամբ օգոստոսի 19-ին կազմակերպել էր սգո նիստ:

Մայր Աթոռից սգո նիստին էին հրավիրված Հունաստանի թեմի առաջնորդ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալֆաքյանը և Վրաստանի թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը: Ակադեմիա էին ժամանել բավնաթիվ գիտական և այլ կազմակերպություններ ներկայացնող անձնավորություններ, որոնք հարգանքի տուրք էին բերել Վեհափառ Հայրապետի սուրբ հիշատակին:

Սրբազան հայրերը ժամը 14-ին ժամանեցին գիտությունների ազգային ակադեմիա, ուր ծանր ու տխուր մթնոլորտում մուտքի մոտ կախած կար Վեհափառ Հայրապետի մեծ լուսանկարը՝ սև և կարմիր ժապավեններով երիզված: Քիչ հեռու լարային նվագախումբը քաղցրությամբ հնչեցնում էր հոգևոր երաժշտություն: Մարդիկ լում էին ամփոփված և մտախոհ:

Սրբազան հայրերին ակադեմիայի հարգարժան փոխպրեզիդենտը հրավիրեց առանձնասենյակ, ուր երկու Սրբազանները հարցազրույց ունեցան Հայաստանի հեռուստատեսության համար:

Ժամը 15-ին նիստի մասնակիցները հավաքվեցին սրահ, ուր դիտեցին Վեհափառ Հայրապետի այն տեսաժապավենը, որ տեսագրված էր մեկ տարի առաջ, հոկտեմբերին, ազգային ակադեմիայում, իր ծննդյան 85-ամյակի առթիվ, որպես պատվավոր ակադեմիկոս:

Տեսաժապավենը դիտելուց հետո խոսք առավ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Ֆաադեյ Տաճատի Սարգսյանը և առաջարկեց մեկ րոպե լռությամբ, հոտնկայս, հարգել Վեհափառ Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիշատակը, որից հետո խոսեց իր հոգեցունց ճառը: Ելույթ ունեցան վաստակաշատ ակադեմիկոսներն ու մտավորական ներկայացուցիչները:

Մայր Աթոռի միաբանության անունից Վեհափառ Հայրապետի պատվին ազգային ակադեմիայի կողմից արժանավայել կերպով կազմակերպված սգո նիստի և գնահատանքի համար շնորհակալություն հայտնեց Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալֆաքյանը:

Երջանկահիշատակ Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսին նվիրված սգո նիստը ավարտվեց Գերաշնորհ Սրբազան հայրերի աղոթքով: